



Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԷՇՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ

ՃԵՄԱՐՄԱՆԸ ՈՒՍՄԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒՄ



Վերատեսուչ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ



Ալորեց իր գոյության երկրորդ տարին էջմիածնի Հոգեվոր ճեմարանը:

1946—1947 ուսումնական տարում ճեմարանը զգալի նվաճումներ է ունեցել — կրկնապատկվել է սաների թիվը, հրավիրվել են նոր դասախոսներ, բարելավվել են սաների կուլտուր-կենցաղային պայմանները:

Ճեմարանի ձեռք բերած նվաճումներն արդյունք են հանդիսանում Վեհափառ Հայրապետի ունեցած ամենօրյա հոգացողության ու լայն օճանդակիության: Վեհափառ Հայրապետը ոչ շանք, ոչ ժամանակ և ոչ է նյութական միջոցներ մի-խնայում ճեմարանի իր կոշման բարձրության վրա դնելու համար: Նա ոչ մի օր չի դադարել ճեմարանի գործերով զբաղվել և միշտ էլ ընդառաջ գնալով բավարարել է նրա բազմապիսի պահանջներն ու կարիքները:

Իր գոյության երկրորդ տարում ճեմարանն ունեցել է առաջին և երկրորդ կուրսեր: Մի շարք նոր առարկաների դասավանդման համար հրավիրվել են նոր դասախոսներ: — Հայոց պատմության համար հրավիրվել է պատմարան-հնագետ՝ դոցենտ Ասլան Շահ-

նազարյանը, երաժշտության համար՝ արվեստի վաստակավոր գործիչ, վաստակավոր ուսուցիչ ու կոմպոզիտոր Դանիել Ղազարյանը, Հայ Եկեղեցու պատմության համար՝ Երիշիկիոր կաթողիկոսության Դպրեվանքի (Անթիլիաս) նախկին դասատու Եղիշե Վարդերեսյանը, Մաթեմատիկայի համար՝ բազմամյա ուսուցիչ ու նախկին ճեմարաննական Գնորդ Մինասյանը, Ռուսաց լեզվի համար՝ Բաքվում և Լենինգրադում ուսած ու փորձառու ուսուցիչ Սարգս Զաքարյանը:

Նոր հրավիրված դասախոսները ճեմարանի մյուս դասախոսների հետ միասին շանք չեն խնայել սաների կրթական գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար: Բացի դասարաննական պարապմոնդերից դասսախոսները մի շարք զեկուցումներ են կարդացել աշխարհագրական (Ա. Գնորդյան), տոմարագիտական (Հ. Քոչարյան), առողջապահական (թօ. Պ. Ղովկասյան) և ատամնաբույժ Ս. Առաքելյան), տիեզերագիտական (Կ. Վորդ. Ասլամազյան), գրականագիտական (Ս. Զաքարյան) և այլ թեմաների շուրջը:

Բացի կրթական գործից հատուկ ուշադրություն է դարձվել նաև սաների կուրսուրական սպասարկման խնդիրներին: Դրսից հրավիրված ուժերի և սաների մասնակցությամբ հաճախակի կազմակերպվել են գրական-գեղարվեստական երեկոներ, որտեղ ի-

րենց ելույթներով ճեմարանի սաներից աշ-
բի են ընկել ջ. Մարգարյանը (ինքնուրույն
բանաստեղծություններով և արտասանու-
թյամբ), Ա. Աղամյանը (արտասանու-
թյամբ), Մ. Շահինյանը (նվազ) և ուրիշ-
ներ:

Ճեմարանում կազմակերպված դասախո-
սություններին և դրական-գեղարվեստական
երեկոյթներին հրավիրվել են նաև միարա-
նության անդամները, որոնք սիրահոժար
կերպով ներկա գտնվելով, երբեմն էլ իրենց
ելույթներով, ինչպես օրինակ Գեր. Գեր.

Երսկուրսիաներ, որոնց ընթացքում սաները
այցելել են երևանի մի քանի թանգարան-
ներն ու Մատենադարանը, եղել են Զվարթ-
ոնցում, Օշական գյուղում այցելել են Ո. Մեսրոպ Մաշտոցի գամբարանը և այլն:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձ-
վել նամանավանդ սաների կրոնական դաս-
տիարակությանը. սաները կանոնավոր կեր-
պով տաճար հաճախելով մասնակցել են
եկեղեցական արարողություններին:

Հատուկ ուշադրություն է դարձվել նաև
սաների կենցաղին. սաներին արամադրված



Հայոց պատմության բննուրյունից հետո.—
Դապետը, դեպի ձախ Ե. Շահագիզը, Սուրեն
Կամարյանը, Ն. Ֆեն. Բավեյանը, դեպի աջ՝ Ս.
Տեր-Հովհաննիսյանը, Ն. Վրդ. Աբրահամյանը,

Խառած են՝ կենտրոնում Վեհափառ Հայ-
կական կողմանը, Ա. Դիլոյանը, Ա. Շահնա-
կամարյանը, Մ. Մինասյանը, Ս. Վրդ.

Ներսես Կափսկոպոս Աբրահամյանը, Սուրեն
Կամարյանը, Սահակ Վարդա-
պետ Տեր-Հովհաննիսյանը, Եղիշե Վար-
դապետ Հարությունյանը և ուրիշներ, Խրա-
խոսել են թե՛ վարչությանը և թե՛ սաներին:

Դասախոսների ու վերակացուների դե-
կավարությամբ սաները մեկնել են Երևան,
ուր Օպերայի ու բալետի թատրոնում լսել
են «Անուշ» օպերան, ինչպես նաև մայրա-
քաղաքի կինո-արաններում զիտել են մի
քանի կինոֆիլմեր:

Ուսումնական տարրվա վերջում ճեմարանի
վարչությունը կազմակերպել է մի շարք

է եղել պարսպապատ պարտեզով մի շենք,
ուր գտնվել են նրանց ննջարանները, ճաշա-
րանն ու խոհանոցը. մեծ նշանակություն
է արվել և սաների ֆիզիկական դաստիա-
րակությանը. Հենց այս շենքի բակում էլ
տեղի են ունեցել ամենօրյա առավոտյան
մարմնամարզական վարժությունները և
հետճաշյա զրուսանքներն ու խաղերը:

Սաներն ապահովուած են եղել Հագու-
տով, ստուգամանով, ննջարանային բոլոր պի-
տույքներով և մննդով:


Այս բոլոր միջոցառումները տվել են ի-
րենց ցանկալի արդյունքները. տարեկերգի

քննությունները ցուց տվեցին սաների բարձր պատրաստականությունը: Բացի ճեմարանի դասախոսներից, տարեվերջի քըննություններին ներկա էին նաև Վեհափառ Հայրապետը և Գերագոյն Հոգեոր Խորհրդի անդամներ՝ Ե. Շահազիզը, Ստ. Մալխասյանցը, Ներսես Եպիսկոպոս Արքահամբանը, Ս. Կամսարականը ու ուրիշներ: Նրանք միաբերան վկայեցին ուսման ասպարեզում սաների ուսնեցած մեծ հաջողությունները: Իրենց դիրքադանց հառաջադիմության և լավա-

տական գործիքների, մարմնամարզական հատուկ դահլիճի, իսկ որ ամենակարևորն է՝ նյութական կայուն բազայի:

Վեհափառ Հայրապետը հոգ է տանուց այս բոլորի համար և լիահուկս ենք, որ Նրա ջանքերն այս ուղղությամբ հաջողությամբ կպակվեն: Արդեն պատվիրված է լաբորատորիաների սարքավորում և երաժշտական գործիքներ:

Ծուտով կավարտվի նաև ճեմարանի սեփական բաղնիքի և լիացրատան շինարա-



Հայոց լեզվի ժննուրյունից հետո, Վեհափառ Հայրապետը Գերագոյն Հոգեոր Խորհրդի անդամների հետ մեկնում է Վեհարան. Վեհի ծախ կողմը մեծանուն հայագետ Ստ. Մալխասյանցը

դույն վարքի համար մի շարք սաներ պարզեատրվել են արժեքավոր գրականությամբ, ինչպես օրինակ Մարտիրոսյան Ռուբիկը, Գևորգյան Քաջիկը, Շահեն Մկրտիչը, երկրորդ կովսիկ և Գասպարյան Գրիգորը, Տերտերյան Արմենակը ու Աղամյան Աղամը՝ առաջին կուրսից: Մի շարք սաներ էլ արժանացել են գովասանքի:

Հավագույն ցուցանիշներով փակելով ուսման երկրորդ տարին ճեմարանը թևակոխում է իր գոյության երրորդ տարին:

Ուսման երրորդ տարում ճեմարանի առաջ նոր խնդիրներ են դրվում: Ճեմարանը կարիք է զգում լաբորատորիաների, երաժշ-

րությունը: Ինչ վերաբերում է նյութական կայուն բազայի ստեղծմանը, Վեհափառ Հայրապետը այս ուղղությամբ էլ քիչ աշխատանք չի տարել: Մենք կարծում ենք, որ սփյուռքի հայ մեծահարուստները չեն զլանա իրենց օժանդակությունը բերելու այս ըստ ամենայնի կարևոր գործին, միանգամ ընդմիշտ կայուն ու ամուր բազա ստեղծելով ճեմարանի համար:

Հոգեոր ճեմարանի գոյության երրորդ տարվա շեմքին մենք լի ենք հավատով նրա ապագայի նկատմամբ և եռանդ չենք խնայի էլ ավելի բարելավելու նրա աշխատանքի պայմանները: